

եան վարժարանը ունի 40 ուսանողներ որոց կ'աւանդուի ուումաներէն եւ հայերէն, թէեւ ի նոցանէ հայկազունը հազիւ տասն հոգի են, մնացեալը ուումէն: Վարժարանն թէեւ անուամբ ազգային եւ հոգարարձութեան ազգային ծախիւքն կանգուն, սակայն ըստ ուումանահայոց սովորութեան երկու ուումէն եւ մէկ հայ ուսուցիչ ունի որ է եկեղեցւոյ դպրապետն Յ. Պրպէնճեան: Արարատեան վարժարանը շինեալ է տեղացի ազգայիններէ կազմուած համանուն ընկերութեան ծախիւքն, անդ եւս կը յաճախեն 20-25 ուսանողուհիներ, յորոց մեծ մասը հրէուհիներ են. հայուհիք թուով 8-10, ունին մի ուումէն ուսուցչուհի եւ մի դասախօս հայերէնի որ Յարութիւն քահ. Անդրէասեան»:

Պուրէշի հայ դպրոցը, այսպէս, դէպի քայքայում կ'երթայ: Ու օր մըն ալ կը փակուի, որովհետեւ ա'լ իրմով հետաքրքրուող մը չըլլար:

Յաւը կը կրծէ սակայն նոր դաղթականութեան ներսը: Կը կազմեն Ուսումնասիրաց ընկերութիւն մը՝ դպրոցը փրկելու միակ տենչով:

Երկու տարի փակ մնալէ յետոյ, Մխաբեան Ազգ. վարժարանը արգարեւ վերաբացուած է 1906-ին, Ուսումնասիրաց ընկերութեան ջանքերով. վարժարանը բացարձակապէս այդ միջոցին ձրի եղած է ամէն դասակարգի հայ տղոց համար: Վարժարանը կարենալ բանալու համար նիւթապէս օգնած են մասնաւորաբար դաղթական Խայերը՝ որովհետեւ տեղացիները խորթ աչքով դիտած են իրենց քունը խոտովոյ այս նորեկները:

Առաջին առթիւ կը բացուին առաջին եւ երկրորդ կարգերը, 41 աշակերտներով: Քանի մը տարիէն կը բացուին վերի երկու կարգերն ալ: Տնօրէնը Կեղրնականցի մըն է՝ Ղազարոս Կոնիկեան որ պաշտօնի վրայ կը մնայ 1906-1912:

Նոյն տարին Վրթանէս Փափազեանը տեսուչ կը հրաւիրուի, բայց տարի մը միայն կը պաշտօնավարէ:

1913-1914 դպրոցը կը վարեն Լիպարիտ Աւետիսեան ամուսինները:

Վրայ կը հասնի պատերազմը: Դպրոցը կը

յանձնուի քահանայի մը՝ Ղեւոնդ Միքայէլեանի, 93 աշակերտներով:

Յետոյ՝ ուումանահայոց դաղթը դէպի Ռուսաստան:

ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԷՁ

Իզմիրի աղէտէն յետոյ հայոց խուճապահար փախուստը Պոլսէն ու շրջականերէն քիչ մը թարմ աւիշ բերաւ ուումանահայ գաղութին, եւ նոր ո՛րս ճարեց ամենակուլ վիշապին: Բայց ան կատարեց նոր պատուաստի մը դերը: Ճիշդ է որ զինազաղարէն անմիջապէս յետոյ ոգեւորութիւն մը սկսեր էր արդէն ուումանահայ գաղութին մէջ եւ վերաբացուեր էին հայ դպրոցներէն մէկ քանին՝ պատերազմին Ռուսաստան դաղթող ուումանահայերուն ստուար մէկ տասը վերադարձած ըլլալով: Բայց շատ սահմանափակ էր աշակերտութեան թիւը, ու այդ թիւն ալ դատապարտուած էր հեղհեղէտ աւելի եւս նուազելու: Դատապարտուած՝ կ'ըսենք՝ որովհետեւ օտար դըպրոցները միշտ ալ աղուոր խայծ մը եղած են այս գաղութին մէջ, ու պիտի ըլլային մանաւանդ վաղը:

1922-ի հոսանքը այդ օրերը քիչ մը հեռացուց: Եկուորները բոլորուեցան հայ դպրոցներուն շուրջ, որովհետեւ, ճիշդը ըսենք, տեղական լեզուին դեռ տեղեակ չէին օտար դըպրոցները զրկելու համար իրենց տղաքը, ինչ որ պիտի ընէին աւելի յետոյ, երբ տուն-տեղ ըլլային, ու սորվէին տեղական լեզուն:

Եթէ ոգեւորութիւնը քիչ մը աւելի կանուխ սկսեր էր, Իզմիրի դէպքերն էին որ եկան արժեցնելու զայն:

Արգարեւ երբ թեմը կազմակերպելու հարցը եկաւ սեղանի վրայ՝ 1921-22-ին, կրթական դործն էր որ կազմեց մտահոգութեան գլխաւոր նիւթը:

Ռումանահայ վարժարանները միակ կրթութեան ծրագրի մը շուրջ համախմբելու մտահոգութեամբ էր որ ուումանահայ դպրոցներու ուսուցիչները 1922 Օգոստոսին համազումար մը ունեցան Պուրէշի մէջ եւ խմբագրեցին ուսումնական ծրագիր մը, զոր ամիս մը յետոյ, թեթեւ փոփոխութիւններով պիտի վաւերացընէր ուումանահայ անդրանիկ թեմական Պատգ. Ժողովը: Սոյն ուսումնական ծրագիրն